

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/7

10 հունիսի 2013թ.

Քննարկվեց «Մեդիտեք» ՍՊԸ 15.05.2013 թ-ի թիվ 15 գրությամբ բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 28.09.2012 թ-ի թիվ 1011780/1 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Մեդիտեք» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 54.069.054 դրամ: Նշված ակտի դեմ «Մեդիտեք» ՍՊԸ 15.05.2013 թ-ի թիվ 15 գրությամբ բերվել է բողոք:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով «Մեդիտեք» ՍՊԸ ներկայացուցիչների և վերստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ «ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում «Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 05.12.2011 թ-ին հարուցվել է թիվ 58214711 քրեական գործը:

«ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Աղաջանյանը, վերանայելով իր վարչություն գտնվող թիվ 58214711 քրեական գործի նյութերը մասնավորապես պարզել է, որ «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 17.05.2013 թ-ի թիվ 14-8/5602 գրությամբ ստացվել է «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտը: Պարզել է նաև, որ ընկերությունը 2012թ-ի հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ավելացված արժեքի հարկի հաշվարկներում լաբորատոր ախտորոշիչ նյութերի իրացման գծով ավելացված արժեքի հարկը չի ներառել հարկվող շրջանառության մեջ՝ խախտելով «Ավելացված արժեքի հարկի մասին» «Օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջները, որի հետևանքով նույն հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները պակաս է արտացոլվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը համանման լաբորատոր ախտորոշիչ նյութերի ներկրմամբ զբաղվել է 2009-2012 թ.թ. ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում, իսկ վերոհիշյալ վերստուգման շրջանակներում այդ ժամանակաշրջանն ընդգրկված է եղել մասնակիորեն, որոշվել է քննվող քրեական գործով նշանակել «Մեդիտեք» ՍՊԸ գործունեության վերստուգում՝ դրա մեջ ընդգրկելով 2009-2012 թ.թ. ընկած ժամանակահատվածի վերստուգման հարցերի շրջանակը՝ բոլոր հարկատեսակների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման գծով, բացառությամբ շահութահարկի, որի գծով վերստուգման ժամանակաշրջանը սահմանվել է 2009-2011 թ.թ.:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ <Մեդիտեք> ՍՊԸ գործունեության վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննվում է քրեական գործ, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:


Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Մեդիտեք> ՍՊԸ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

<Մեդիտեք> ՍՊԸ 15.05.2013 թ-ի թիվ 15 գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ